ՆԱԶԱՐ.– Գալիս է՝ թող գայ. ի՞նչ ես նախրի իշի պէս առաջ վազում: (Սենեկապետը գնում է) «Թագուհին»: Աղունակի ձո՛ւ է: Մեբաշ չփիխլուի՛: (Ներս է մտնում Ուստիանը թագուհու զգեստներով:)

ՈՒՍՏԻԱՆ.– (Մանր ու բարակ առաջանալով դէպի Նազարը եւ նրա կողքին բարձ որոնելով եւ չգտնելով՝ ներս է կանչում Սենեկապետին:) Սենեկապե՞տ: (Սենեկապետը ներս է գայիս:) Քեոփակ, ո՞ւր է բարձս:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Վա՛յ, բարձը չեն բերել (Դողում է):

ՆԱԶԻՐ.– (Գաւազանով խփում է Սենեկապետին) Ծո՛ւն, շան որդիք: Ուստիան թագուհին գայ նստելու՝ բարձ չբերե՞ք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Չոքելով) Հանդերձապեան է մեղաւոր, խնայի, խնայի, կարկո՛ւտ բարկութեան:

ՆԱԶԻՐ.– Գլուխը կտրեցէք: (Սենեկապետը դուրս է գնում:)

ՈՒՍՏԻԱՆ.– Մեղայ, թագուհին գալիս է նստի, բարձ չեն դնում: Ես չոր գետնին պիտի նստե՞մ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս գալով) Թագաւորն ապրած կենա: Հանդերձապետի գլուխը կտրեցին:

ՈՒՍՏԻԱՆ.– Հողե՛մ գլուխը: Շատ էլ լա՛ւ արին: Արարմունքի՞ն մտիկ:

Սենեկապետը դուրս է գնում եւ բարձ է բերել տալիս մանկլաւիկի ձեռքով, որ դրւում է Ուստիանի տակ:

ՆԱԶԱՐ.– Սրանից ետ աւելի փափուկ բարձ բերէք: Ուստիան թագուհու մսերը փափուկ են: (Լռութիւն:)

ՈՒՍՏԻԱՆ.– Քեֆդ ինչո՞ւ է խարաբ:

ՆԱԶԱՐ.– Քեֆս խարաբ չէ: (Աւելի լուրջ կերպարանք է առնում:)

ՈՒՍՏԻԱՆ.– Ի՞նչ իմանամ, երեկվանից դեսը մի տեսակ ես:

ՆԱԶԱՐ.– (Մի քիչ սրտնեղ) Հանաք, մասխարութիւն մի՛ գիտենա, Ուստիան: Տէրութիւն եմ դարձնում: Խելք է պէտք: Էսօր աշխարհքի աչքը վրաս է տնկուած: Հիմի իմ ժաժ գալս, խօսքս, խելքս, պատիւս ամենքին օրինակ է: Օրաւուր մեծ խելքի տէր ենք դառնում: Հիմի ես ուրիշ մարդ եմ:

ՈՒՍՏԻԱՆ.– Աստուած տա, ո՞վ չի ուզում:

ՆԱԶԱՐ.– (Զգելով) Է՛, տէրութեան գործը շա՛տ էր էսօր: Թամամ բեզարեցի: Մի քիչ քեֆ անենք: (Սենեկապետին:) Է, գեադա՛: (Սենեկապետը ներս է գալիս:) Ճա՛շ բեր: (Սենեկապետը գնում է:) Մի լաւ ճաշ ուտենք, հը՞, Ուստիան խանում: